

Contact Information:

Armenian Educational Foundation
600 West Broadway, Suite 130
Glendale, California 91204
Telephone: (818) 242-4154
Email: aef@aefweb.org
Website: www.aefweb.org

Անմիջական Հրատարակութեան համար:

Հայ Կրթական Հիմնարկութիւն

Մամլոյ Հաղորդագրութիւն

Յունւար 31, 2018

ՀԿՀ-եան 2018 թի Դպրոցական Պիտոյքների Ծրագիր

Հայ Կրթական Հիմնարկութիւնը Շամլեան Ազգային Վարժարանում
ձեռնարկեց իր 10րդ տարեկան Դպրոցական Պիտոյքների Ծրագիրը

Լաքրասէնթա, Քալիֆորնիա - Յունւար 20, 2018

Շաբաթ, Յունւար 20ին, Հայ Կրթական Հիմնարկութիւնից «ՀԿՀ» 28 եւ Շամլեան Ազգային Վարժարանից 16 կամուրներ, Շամլեան Ազգային Վարժարանում մասնակցեցին Հայ Կրթական Հիմնարկութեան 10րդ Դպրոցական Պիտոյքների Ծրագրին: Ձեռնարկը ի մի էր բերել Հայ երիտասարդների կրթութեանը սատարող եւ նրանց հասարակական իրազեկմանը նւիրեալ երկու համայնքներին:

Շամլեանի Ուսանողական Խորհուրդի անդամ եւ Դպրոցական Պիտոյքների Ծրագրի Փոխ-Ատենապետ Ջան Բաղդասարեանը բացատրեց, «այսօր մենք ունենք 30 տուփ որոնց մէջ տեղադրելու ենք 330 աշակերտների դպրոցական պիտոյքները: Նրանց են աւելանալու ուսուցիչների դասարանային պիտոյքները: Տուփերը ուղարկւելու են ՀԿՀ-ան Երեւանի գրասենեակ յետոյ Հայաստանի 5 եւ Արցախի 13 դպրոցներին: ՀԿՀ-եան աջակցութեամբ եւ Շամլեանի աշակերտների օժանդակութեամբ ծրագրում ենք մեծ թւով աշակերտների օգնելու համար դրամահաւաք կազմակերպել: Մեր 2019-ի թիրախն է պատրաստել 1,000 պայուսակ իր պարունակութեամբ:»

Շամլեանի Ուսանողական Խորհուրդի անդամ եւ Դպրոցական Պիտոյքների Ծրագրի Փոխ-Ատենապետ Մայքըլ Բաղդասարեանը նաեւ աւելացրեց, «այս ծրագրի կամուր աշխատանքը ինձ եւ ընկերներին օգնում է ըմբռնել Հայաստանի եւ Արցախի աշակերտների իրավիճակը: Ամեն անգամ այս պայուսակների մէջ որեւիցէ պիտոյք դնելիս անդրադառնում ենք մեր ունեցած

առանձնաշնորհումները: Հաւանաբար որոշ աշակերտների մատիտները կոտրուում կամ տետրակները կորում են, սակայն տարբերութիւնը մեզ հետ նրանումն է, օր իրենց մօտ չկայ Staples-ի նման վաճառատուն կորուստը նորով փոխարինելու: Այն աշակերտները որոնք մաս են կազմում Դպրոցական Պիտոյքների Ծրագրին, հեռաւոր վայրերում գտնւելու պատճառով, նման խանունքներ իրենց հասանելի չէ, եւ գնելու հնարաւորութիւնն էլ չունեն: Կամաւոր աշխատանքը այսօր մեզ գոհունակութիւն եւ հպարտութիւն է պարգեւում որովհետեւ մենք դպրոցական պիտոյքներով մեր նման աշակերտներին օգնելու հնարաւորութիւնը ունենք :»

Դպրոցական Պիտոյքների Ծրագիրը սկսեց այն պահից երբ Մաւադեան ընտանիքը այցելեց Հայաստանի գիւղերից մէկը եւ նկատեց որ աշակերտները հազիւ ունէին սահմանափակ դպրոցական պիտոյքներ, նաեւ ոչ մի գեղարուեստի եւ արուեստի աշխատանքի նիւթեր: Այդ պակասը պատճառ էր դառնում աշակերտների հիացթափութեանը եւ ուսման շարունակելու ցանկութիւնը:

Երբ նրանք վերադարձան ԱՄՆ, իրենց առաջին դպրոցական պիտոյքները ուղարկեցին հէնց այդ դպրոցին: Երբ այդ դպրոցից շնորհակալական եւ երախտագիտութեան նամակների հոսանքը սկսեց, եւ երբ Հայաստանի աշակերտների ցնծութիւնն ու խոր յուզումը հասաւ ԱՄՆ-ի նւիրատուների, կամաւորների եւ աշակերտների սրտերին, ապա ժամանակն էր ծաւալել ծրագրի մաշտաբը համագործակցելով Հայ Կրթական Հիմնարկութեան հետ: 2007 թի իր առաջին առաքումից մինչ օրս Դպրոցական Պիտոյքների Ծրագիրը պայուսակներ եւ դպրոցական պիտոյքներ է յանձնել աւելի քան 19,000 Հայաստանի, Առցախի եւ Ջաւախքի մեծամասնութեամբ գիւղային եւ դժւար հասանելի դպրոցների աշակերտներին:

ՀԿՀ-եան համագործակցութեան նպատակը Շամլեանի աշակերտների հետ եղել է կամաւոր աշխատանքի միջոցով օժանդակել Հայ երիտասարդներին, որպէսզի ոչ միայն նրանք գիտակցեն Հայաստանի անմխիթար շրջանների աշակերտների պայմանները այլ իրենց լիազորւած զգան:

Յետադարձ կապ՝
Հայ Կրթական Հիմնարկութեան
Ել-փոստ՝ aef@aefweb.org
Հեռ.- (818)242-4154